ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 օգոստոսի 2022 թվականի թիվ 242-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԵՐԹԱԿԱՆ՝ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-22-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ, ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականին հերթական մարդահամար անցկացնելու ժամկետներ, 2019 թվականին փորձնական մարդահամար անցկացնելու տարածքներ և ժամկետներ հաստատելու, 2022 թվականի մարդահամարի աշխատանքներին աջակցելու նպատակով հանրապետական, Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմը հաստատելու մասին» թիվ 1115-Ն որոշումը՝

որոշում եմ

Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականի մարդահամարի նախապատրաստական և անցկացման աշխատանքներին աջակցելու նպատակով ձևավորել Տավուշի մարզային հանձնաժողով և հաստատել դրա կազմը համաձայն հավելվածի:

Հայկ Ղալումյան

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

Հավելված
ՀՀ Տավուշի մարզպետի
2022 թվականի օգոստոսի 29-ի թիվ 242-Ա որոշման

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականի մարդահամարի նախապատրաստական և անցկացման աշխատանքներին աջակցելու նպատակով ձևավորված Տավուշի մարզային հանձնաժողովի

Հայկ Ղալումյան	ՀՀ Տավուշի մարզպետ, հանձնաժողովի նախագահ
Աիդա Աչինյան	ՀՀ վիճակագրական կոմիտեի Տավուշի մարզային վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Սերգո Ավետիսյան	ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Անի Մելիքսեթյան	ՀՀ Տավուշի մարզպետարանի քարտուղարության պետ, հանձնաժողովի քարտուղար
Արթուր Ճաղարյան	Իջևան համայնքի ղեկավար
Դավիթ Սարգսյան	Դիլիջան համայնքի ղեկավար
Արսեն Աղաբաբյան	Նոյեմբերյան համայնքի ղեկավար
Սամվել Հովսեփյան	Բերդ համայնքի ղեկավարի տեղակալ
Ռուբեն Տիգրանյան	ՀՀՏավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Աղաբեկ Գալստյան	ՀՀ Տավուշի մարզպետարանի ՏԻՄ և ՀԳՄ վարչության պետ
Մերուժան Հարությունյան	ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Միսակ Մելքումյան	ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ
Նոնա Եղիկյան	Կադաստրի կոմիտեի «Իջևան» սպասարկման գրասենյակի պետ
Ռիմա Դալլաքյան	Կադաստրի կոմիտեի «Դիլիջան» սպասարկման գրասենյակի պետ
Արայիկ Փայտյան	Կադաստրի կոմիտեի «Բերդ» սպասարկման գրասենյակի պետ
Արմիկ Ազատյան	Կադաստրի կոմիտեի «Նոյեմբերյան» սպասարկման գրասենյակի պետ

Գլխավոր քարտուղար՝ Արման Գևորգյան

30.08.2022

X

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN ARMAN 2412760241